Community-led Urban Strategies in Historic Towns (COMUS)

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

«Համայնքի կողմից իրականացվող քաղաքաշինական ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) ծրագիր

Հին Գորիս քարանձավային բնակավայրի վերականգնում

Նախնական տեխնիկական գնահատում

Բովանդակություն

1. Ներածական 3

2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը..... 5

3. Վարչական տեղեկություններ 6

4. Վիճակի եզրակացություն..... 7

5. Առկա տեղեկություններ 8

6. ՆՏԳ-ի շրջանակը..... 14

7. ՆՏԳ..... 15

8. Փաստաթղթավորում 20

9. Նպատակահարմարության վերաբերյալ..... 28

1. Ներածական

Նկ.1. Հին Գորիս (Կյորես) գյուղ

1.1 Երկիրը կամ տարածքը - Հայաստան
1.2 Տեղեկությունները համադրող կազմակերպության անունը -
1.3 Կոնտակտային անուն - Սանամյան Հովհաննես
1.4 էլ-հասցե - hovhannessan@yahoo.com
1.5 Շենքի կամ վայրի անվանումը և հասցեն – Հին Գորիս բնակատեղի-գյուղատեղի
1.6 Գույքագրման համար(ներ)ը – Հուշարձանի համար (պետ. ցուցիչ) – 8.3.2
1.7 Շենքի/հուշարձանի/վայրի տեսակը - Հանրապետական նշանակության հուշարձան
1.8 Կարևոր ամսաթվեր

1625 թ. - բնակավայրը Գորէս ձևով վկայակոչված է ձեռագիր հիշատակարանում

1750 թթ. Գորիսը դարձել է մելիքանիստ

1805 թ. ռուս – պարսկական պատերազմի արդյունքում կնքված Քյուրակչայի պայմանագրով Զանգեզուրն անցել է Ռուսաստանի տիրապետության տակ: Գորիսը դարձել է Ռուսական կայսրության ռազմակայան:

1813 թ. Գյուլիստանի պայմանագրով այդ իրողությունը ստացել է նոր վավերացում:

1822 թ. Ղարաբաղի խանության փոխարեն ստեղծվել է Ղարաբաղի պրովինցիա: Զանգեզուրը՝ մելիքական բաժանումով, մտել է պրովինցիայի կազմի մեջ:

1823 թ. Գորիսն ունեցել է 119 ծուխ բնակիչ:

1826 թ. Երբ սկսվել է ռուս – պարսկական պատերազմը, Գորիսում տեղակայվել է ռուսական բանակի 42 – րդ եգերական գնդի երեք վաշտ:

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով նոր վավերացում է ստացել Զանգեզուրը (Գորիսը) Ռուսական կայսրության բաղկացուցիչ մաս լինելու իրողությունը:

1840 թ. ապրիլի 10 –ին Ղարաբաղի պրովինցիան վերածվել է Շուշու գավառի՝ Կասպիական մարզի կազմում: Զանգեզուրի բոլոր մելիքությունները մտել են Շուշու գավառի մեջ՝ որպես առանձին գավառամաս: Գորիսը դարձել է նորաստեղծ գավառամասի կենտրոնը:

1849 թ. Զանգեզուրի գավառամասը՝ Գորիս կենտրոնով, մտել է Երևանի նահանգի մեջ:

1867 թ. դեկտեմբերի 9 –ին Ռուսաստանի կայսեր հրամանագրով ստեղծվել է Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգը (կենտրոնը՝ Ելիզավետպոլ): 1868 թ. փետրվարի 25 -ին նահանգի կազմում ձևավորվել է Զանգեզուրի գավառը, որի կենտրոն հայտարարվել է Գորիսը

1.9 Ընթացիկ կիրառում(ներ)ը

Քարանձավաները և 19-րդ դարի բնակելի տները լքված են: Կից տեղի բնակիչները կառուցվել են տներ, որոնք հիմնականում ներդաշնակ չեն հուշարձան- արգելոցի միջավայրին: Գործում է Սբ. Հռիփսիմե եկեղեցին, նաև առկա է գործող գերեզմանոց:

2. Ամփոփագիր՝ վայրը և դրա կառավարումը

Հին Գորիսից մնացած իմացաբանական և պատմաճարտարապետական տեսակետից արժեքավոր հուշարձանները, բնական ու արհեստական կացարանները այսօր գրեթե անգործության են մատնված և լավագույն ձևով չեն օգտագործվում: Անվերադարձ կորած է համարվում նաև բնակավայրի «Բնական» տարածահատակագծային հետաքրքիր կառուցվածքը: Թաքնված են մնում և մոտ տարածություններից չեն ընկալվում անկրկնելի բնության հետ ներդաշնակված նրա համայնապատկերը:

Տարածքը բնակեցված է: Տարիների ընթացքում կառուցվել են մեկ-երկու հարկանի բնակելի տներ իրենց հողամասերով, պարիսպներով և ավելանում են այս ինքնակամ շինությունների թիվը: Երկար ժամանակ կիսավեր վիճակում էր Սբ Հռիփսիմե եկեղեցին: Սակայն 2012թ այն վերականգնվեց և այժմ գործում է: Մաքրվել է նաև եկեղեցու հարակից տարածքը մոտակայքում գտնվող մի քանի ժայռափոր կացարաններ: Գործում է նաև գերեզմանոցը, և հին Գորիս արգելոցի սահմանափակը տարածքը համալրվում է նոր գերեզմաններով:

3. Վարչական տեղեկություններ

3.1 Պատասխանատու մարմիններ

ՀՀ Մշակույթի նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, Գորիսի քաղաքապետարան

3.2 Շենք/վայր, անվանում և հասցե - Հին Գորիս պատմամշակութային արգելոց

3.3 Քարտեզին հղում - 39° 30′ 28″ N, 46° 20′ 19″ E, 39.507778, 46.338611

3.4 Հուշարձանի տեսակը - Հանրապետական նշանակության հուշարձան բնակատեղի-գյուղատեղի, պատմաշկութային արգելոց

3.5 Սեփականության իրավունք – Տարածքում կան սեփականաշնորհված բնակելի տներ

3.6 Օրենքով սահմանված պաշտպանություն/ սահմանափակումներ

Պատմամշակութային արգելոցի տարածքի հողօգտագործումը կարող է թույլատրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Հուշարձանների պահպանման գոտիներում կարելի է կատարել տարածքի պեղման, հուշարձանների վերանորոգման և վերականգնման աշխատանքներ: Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության լիազոր համաձայնությամբ կարելի է նաև այդ տարածքներում նոր շինություն իրագործել: Սակայն նախագծային առաջադրանքներն ու նախագծերը համաձայնեցվում են լիազորված մարմնի հետ:

4. Վիճակի եզրակացություն

4.1 Ֆիզիկական վիճակի եզրակացություն՝ շատ վատից մինչև լավ

Շատ վատ

4.2 Վիճակի ռիսկի գնահատում՝ գնահատվում է A-H միջակայքում

H

4.3 Միջամտության առաջնահերթությունը՝ բարձր/միջին/ցածր

Բարձր

5. Առկա տեղեկություններ

5.2 Փաստագրական աղբյուրներ



Նկ. 2. Սխեմա՝ ըստ ախիվային նյութերի և Ս. Խանզադյանի տեղեկությունների



Նկ.3. Գորիսի հատակագիծ, 20-րդ դարի 20-ական թթ

Նկ.4. Գորիսի հատակագիծը, 1980-ական թթ

Նկ.5. Գորիսի համայնապատկեր, 19-րդ դարի վերջ



Նկ.6. Հատված հին Գորիսից, 19-րդ դարի վերջ



Նկ. 6. Գորիսի քաղաքի պատմշակութային արգելոց

Նկ. 7. Բրուտանոց 19-րդ դար



Նկ. 8. Բնակելի քարայր, հատակագիծ

Նկ. 9. Բնակելի քարայր



Նկ.10. Ձիթհան, կից ջրաղացով և այրով, հատակագիծ

Նկ. 11. Ձիթհան, կից ջրաղացով և այրով

5.2 Օգտագործված գրականություն

- Գորիս քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագիծ, ՀՀ Մշակույթի նախարարություն, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն, Երևան 2011թ
- Հախվերդյան Ս., Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005
- Օրբելյան Ստ., Սյունիքի պատմություն, Երևան, 1986
- Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973

- Պապուխյան Ն., Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972
- Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969

5.3 Արդեն կատարված դաշտային աշխատանքներ

2010թ. Հին Գորիս գյուղատեղիի Սբ. Հռիփսիմե եկեղեցու շրջակայքում կատարվել է հնագիտական պեղումներ

2009-2013թթ. Հին Գորիս գյուղատեղիի Սբ. Հռիփսիմե եկեղեցին վերականգնվել է «Երկիր և մշակույթ», «Վիեն Գորիս» կազմակերպությունների և Վիեն քաղաքի տրամադրած միջոցներով: (տես նկ. 14,15)

5.4 Ընթացիկ ծրագրեր

«Երկիր և մշակույթ» կազմակերպությունը Հին Գորիսում կատարում է Մելիք Օհանի ապարանքի պեղման և մաքրման աշխատանքներ:

5.5 Արդեն պլանավորված ծրագրեր

«Երկիր և մշակույթ» կազմակերպությունը նախատեսում է Հին Գորիսում վերականգնել Մելիք Օհանի ապարանքը, մաքրել և բարեկարգել Սբ Հռիփսիմե եկեղեցուն հարող տարածք:

5.6 Արդեն կատարված ֆինանսական հաշվարկներ

6. ՆՏԳ-ի շրջանակը

6.1 Գնահատման չափը/բնույթը

Սանամյան Հովհաննես– ճարտարապետ, ճարտարապետության դոցենտ
Քալանթարյան Նանար – ճարտարապետ
Աշխատանք կատարելու համար, մոտավոր հաշվարկներով, ծախսվել է տասնհինգ օր:

6.2 Ուսումնասիրության սահմանափակումները

Ուսումնասիրություններ կատարելու ընթացքում, փաստաթղթերին ծանոթանալու համար հիմնականում դժվարություններ չի առաջացել: Միակ խոչընդոտը առաջացել է տեղում ուսումնասիրությունների ժամանակ, երբ անհրաժեշտ հետազոտման տարածքում մի հատված պարսպված էր մետաղական ցանցով, մուտք՝ կողպված:

7. ՆՏԳ

7.1 Նախապատմություն՝ ձևը, գործառույթը և զարգացումը

7.1.1 Շենքի/վայրի համառոտ նկարագիրը՝ դրա քաղաքային կամ գյուղական համատեքստի վերաբերյալ նշումներով, եթե կիրառելի է:

Գորիս քաղաքը հիմնադրված է Զանգեզուրում, Երևանից 250 կմ հարավ-արևելք: Գտնվում է պատմական Հայաստանի Սյունիքի նահանգի Հաբանդ գավառում, Վարարակն գետի ձախ ափին, Ձագեձորի հովտում: Այն զբաղեցնում է 60 հա մակերես և պարփակված է հետևյալ սահմաններով՝ հյուսիսից Շոռին ձորով, արևելքից Լաչին քերծով, հարավից Լաստի սարի հյուսիսային լանջով, իսկ արևմուտքից՝ Վարարակն գետի ձորի արևմտյան լանջով:

Հին Գորիսի ինքնատիպությունը պայմանավորված է հատկապես շրջապատող բնությամբ կոնաձև ուղղաձիգ ժայռերով: Այն մինչև 20-րդ դարի սկիզբը ամբողջությամբ բնակեցված է եղել վաղագույն ժամանակներից: Ամբողջ բնակավայրի տարածական կառուցվածքը կրկնել է բնական տեղանքի տարածական ձևերը (տես նկ. 1, 4, 5):

7.1.2 Շենքի կամ վայրի՝ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը պատմական զարգացման և էվոլյուցիայի համառոտ ակնարկ:

Մինչև 18-րդ դարը Գորիսում, որպես բնակելի տներ ծառայում էին ժայռափոր բնակարանները, որոնք կոչվում են քրատակեր, փորվում էին քարաժայռերի «քերծերի» մեջ, բավականին մեծ թեքություն ունեցող ձորալանջերին, կոնաձև ժայռերում: Քրատակերը հիմնականում բաղկացած էին մի մեծ սենյակից, թեև երբեմն ունենում էին նաև հարակից խոռոչ-սենյակներ:

Ձագեձորում կերտվել են նաև այնպիսի քարանձավներ, որոնք ունեն միայն պաշտպանական նշանակություն, ուր կարելի է բարձրանալ միայն ճոպանների օգնությամբ:

Գորիսում եղել են նաև հատուկենտ, մի քանի հարակից բաղկացած և ներքին միջանցքներով կապված ժայռափոր բնակարաններ, որոնց վերևի սենյակներն ունեցել են նաև ժայռերից կախված փայտե պատշգամբներ: Ժամանակի ընթացքում քարանձավները լրացվել և ավելի հարմարավետ են դարձվել: Նրանց առջև կառուցվել են թաղակապ, կամարաձև բացվածքներով նախասրահներ, որոնք ունեցել են կենցաղային բազմաթիվ հարմարություններ՝ օջախ, թոնիր, պահարաններ և այլն:

19-րդ դարից սկսած Հին Գորիսում սկսում են քարե կանոնավոր տներ կառուցել, իսկ քրատակերը ծառայում են որպես տնտեսական մաս:

Գյունեի և Միջին թաղերից վեր գտնվող բլուրները ընդգծված էին Սբ. Հռիփսիմե եկեղեցու և Մելիքների մատուռի ոչ մեծ ծավալներով:

Ենթադրվում է, որ Սբ Հռիփսիմեի եկեղեցին կառուցվել է 4-րդ դարում, հեթանոսական մեհյանի տեղում, 16-րդ դարում եկեղեցին վերակառուցվել է:

Խորհրդային տարիներին եկեղեցին վերածվել էր ակումբի: 2009-2013թթ. եկեղեցին վերականգնվել է և այսօր այն գործում է:

Մելիքների մատուռը (17 դ). գտնվում է Հին Գորիսի Միջին թաղի արևելյան կողմում գտնվող գերեզմանոցի հյուսիսային մասում: Այն իրենից ներկայացնում է թաղածածկ, միանավ բազալիկ կառույց՝ կառուցված ճեղքված բազատ քարով: Մատուռը ծառայել է որպես դամբարան Հին Գորիսի մելիքների համար:

Գորիսում բավականին մեծ թիվ էին կազմում ջրաղացները և բաժանված էին հիմնականում երկու խմբի: Առաջին մեծ խումբը գտնվում էր Վարարակն գետի աջ ափին, Հին Գորիսի Զոփչուն և Լաստի թաղերի դիմաց: Երկրորդ խումբը բաղկացած էր չորս ջրաղացից և կառուցված էր Միրաքենց կամրջից դեպի ներկայիս Կոմիտասի փողոց գնացող ճանապարհի եզրին: Այստեղ օգտագործվում էին ստորգետնյա ջրերը: Այժմ պահպանված է այդ շարքի ջրաղացներից մեկը, որն իրենից ներկայացնում է 4x5 մ չափի մի ուղղանկյուն, երկթեք ծպեղնածածկով կառույց:

Երեքն ձիթհաններից՝ Միրումենցը, Միրաքենցը և Տռոզին թաղի ներքևինը մինչև այժմ պահպանվել է միայն Միրումենց ձիթհանը:

Հին Գորիսում գործում էին նաև բրուտանոցներ: Այսօր պահպանվել է միայն Ղաթրինի ձորի բրուտանոց

7.2 Նշանակություն

7.2.1 Նշանակության/պատմական և ժառանգության կարևորության վերաբերյալ ամփոփ նկարագիր:

Գորիսի բազմադարյան պատմության ընթացքում բնակավայրում ստեղծվել են նյութական մշակույթի մեծարժեք հուշարձաններ, որոնք Զանգեզուրի անկրկնելի բնության հետ մեկտեղ արժեքավորում են Գորիսը: Բնության և պատմաճարտարապետական հուշարձանների առկայությունը, որոնցից հատկապես արժեքավոր են բազմաթիվ բնական և արհեստական բնակելի քարայրները և բնակել տները, և քաղաքի ինքնատիպ ճարտարապետական դեմքը բավարար հիմք են հանդիսանում քաղաքում պատմամշակութային ֆունկցիայի զարգացմանը, որն իր հերթին կնպաստի նաև տեղական ու արտասահմանյան տուրիզմի զարգացմանը:

Ձիթհանների և բրուտագործական արհեստանոցների առկայությունը և նրանց վերաօգտագործումը թույլ կտա ոչ միայն զարգացնել արհեստագործությունը, այլև կխթանի տուրիզմի զարգացմանը:

7.2.2 Գնահատման մեջ հաշվի առնվող հնարավոր կատեգորիաների ստուգացանկ:

Հնարապետական նշանակության պատմամշակութային արգելոց է, որը ներկայանում է թե որպես բնական և թե ճարտարապետական հուշարձան: ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի մեջ ներառված են Սբ Հռիփսիմե եկեղեցին, «Մելիքների» եկեղեցին, 52 բնակելի քարայր, քարանձավային անֆիթատրոն, քարավանատուն, բնակելի քարաբուրգերի համալիր, ամրոց Զագեձորը, ձիթհան, կամուրջ Վարարակն գետի վրա, 9 բնակելի տուն, գերեզմանոց, տապանաքարեր և խաչքարեր:

7.3 Խոցելիության/ռիսկի գնահատում

Այսօր հին բնակավայրից պահպանվել են Սբ. Հռիփսիմե եկեղեցին (վերականգնված 2012թ.), Մելքների մատուռը, արժեքավոր քանդակազարդ գերեզմանաքարեր, ձիթհան, ջրաղաց և բազմաթիվ «Քրատակ» բնակարաններ ու բնակելի տների ավերակներ: Հին Գորիսից մնացած իմացաբանական և պատմաճարտարապետական տեսակետից արժեքավոր հուշարձանները, բնական ու արհեստական կացարանները այսօր գրեթե անգործության են մատնված և լավագույն ձևով չեն օգտագործվում: Անվերադարձ կորած է համարվում նաև բնակավայրի «Բնական» տարածահատակագծային հետաքրքիր կառուցվածքը: Թաքնված են մնում և մոտ տարածություններից չեն ընկալվում անկրկնելի բնության հետ ներդաշնակված նրա համայնապատկերը:

Այս տարածքում կառուցվել են բնակելի տներ, որոնք շարունակում են ընդլայնվել: Անհրաժեշտ է արգելել տարածքում կատարվող մասնավոր շինարարությունը և վերացնել միջավայրին աններդաշնակ տները:

Այսօր էլ շարունակվում են Գորիսի հին գերեզմանուցում թաղումները: Պետք է արգելել թաղումները և հանել նոր տեղադրված ցանկապատերը:

7.4 Տեխնիկական վիճակ

Հին Գորիս արգելոցը լքված է և այն հետզհետե քայքայվում է և քանդվում: Քարանձավերը ի տարբերություն 19-րդ դարի բնակելի տների գտնվում են ավելի բարվոք վիճակում: Վերջիններս քանդվում են թե բնակլիմայական պայմաններից, թե տեղի բնակիչների անխնամ վերաբերմունքից:

7.5 Անհրաժեշտ վերանորոգման համառոտ նկարագիր

Կարևոր խնդիրներից է ճանապարհների վերականգնումը, վերակառուցումը իրենց նախկին տեսքով՝ տեղական սալաքարերով: Անհրաժեշտ է կատարել պեղման և մաքրման աշխատանքներ Հին Գորիսի քարանձավային արգելոցում, վերականգնել և վերօգտագործել բնակելի տները: Վարարակն գետի վրա վերականգնել և կառուցել նոր կամուրջներ՝ վերստեղծելով կապը Հին Գորիս արգելոցի և Գորիս քաղաքի մեջ:

7.6 Կոնսերվացման/վերականգնման քաղաքականություն և առաջարկներ

7.6.1 Վայրի տեսլականի և դրա կայունության վերաբերյալ ամփոփումը նախնական փուլում

Հին Գորիսի տարածքում գտնվող պատմաճարտարապետական հուշարձանները և բնական քերծերն ու քրատակերը իրենց անսովոր հետաքրքիր ձևերով լրացնում են քաղաքային միջավայրը, հարստացնում այն և նրան հաղորդում գեղարվեստական մի նոր որակ: Ներկայիս իրավիճակում Հին Գորիսի դերի ակտիվացման համար անհրաժեշտ է ապահովել և բարելավել նրա ընկալումը Վարարակն գետի աջ և ձախ ափերին ձգվող չկառուցապատված հատվածներից, հատկապես նրա աջափնյա բարձր դիրք ունեցող «Կալին բաշ» կոչվող հարթակից, ինչպես նաև Ջափարիձեի, Գրիգոր Տաթևացու, Կոմիտասի և Գուսան Աշոտի փողոցներից: Նշված փողոցներից ընկալման ապահովումը կարևոր է Հին և Նոր Գորիսների կոմպոզիցիոն փոխկապվածության ամրապնդման համար: Վարարակն գետի աջափնյա հատվածները նպատակահարմար է չկառուցապատել և օգտագործել որպես դիտահրապարակներ:

7.6.2 Կոնսերվացման փիլիսոփայությունը

Տարածքը գտնվում է պահպանական գոտու մեջ և բոլոր միջամտությունները պետք է կատարվեն արդեն ձևավորված արհեստական կենսապատկերի (լանդշաֆտի), պատմամշակութային համալիրի և դրա պատմական միջավայրի պահպանության նպատակով: Պաշտամունքային կառույցները, որոնք լավ են պահպանվել անհրաժեշտ է վերականգնել, բնակելի տները՝ վերականգնել այժմյան պահանջներին համապատասխան և նոր գործառույթ տալ:

Հարկավոր է նաև ընգծել մշակույթի և արհեստների դերը Հին Գորիսում: Պահպանվել է Հին Գորիսի քարանձավային թատրոնը և վերականգնելով այն, այնտեղ հնարավոր կլինի կազմակերպել միջոցառումներ, ներկայացումներ (տես նկ. 19, 20):

7.6.3 Միջամտության մակարդակ

Հին Գորիսի տարածքի այսօրվա կյանքի առաջադրած պահանջներին համապատասխան օգտագործելու համար վերականգնել նույնությամբ և բնակեցնել կյանքի նկատմամբ ժամանակակից պահանջներ ունեցող մարդկանցով, խելամիտ չէ և նույնիսկ այսօր անհնար:

Առաջարկվում է հենվելով Հին Գորիսի տարածահատակագծային կառուցվածքի վրա, որոշ իմաստով այն վերականգնելու ձգտմամբ, ստեղծել Զանգեզուրի տարածաշրջանին սպասարկող զբոսաշրջության կենտրոն՝ տարաբնույթ ուղղվածությամբ (էթնոտուրիզմ, էկոտուրիզմ, ագրոտուրիզմ և այլն):

Պատմական բնակավայրի նախկին թաղամասերի տեղում նույն անվանմբ կարող են ստեղծվել տուրիստական Լաստի, Տռոզին, Զոփչուն, Դոլունց, Գյունեի, Ղուզի, Ըմբովի, Միջին, Ղաթրին ու Ծոռին թաղամասերը, որոնք միմյանց և համալիրի հասարակական կենտրոնի հետ կապվում են նախկինում գոյություն ունեցող ճանապարհներով: Որպես տուրիստական համալիրի գլխավոր ճանապարհ, որից ճյուղավորվում են տուրիստական թաղամասեր տանող ճանապարհները և, որի միջոցով ամբողջ համալիրը կապվում է քաղաքին, օգտագործվելու է նախկին առևտրական ճանապարհը:

7.6.4 Պատշաճ օգտագործման նախնական առաջարկներ, եթե կիրառելի է:

Առաջնահերթ պետք է նորոգվի Հին Գորիս ի տանող ճանապարհը և վերականգնել ինժեներական կոմունիկացիաները՝ պահպանելով պատմական միջավայրը:

Բնակավայրի սկզբնամասում անհրաժեշտ է տեղադրել տեղակատվական քարտեզ-վահանակ, ուր այցելուների համար նշված կլինեն բոլոր հասարակական կառույցները, հուշարձանները, տուրիստական վայրերը և ուղիները:

Բնակավայրի ծայրին՝ նախկին քարավանատան տեղում, կարող է տեղադրվել զբոսաշրջիկների ընդունման և տեղաբաշխման կենտրոնը:

Զբոսաշրջային թաղամասերում առաջարկվում է կազմակերպել երեք տիպի հանգրվաններ՝

ա. Քրատակ հանգրվաններ (էթնոտուրիզմ) - այս հանգրվաններից կարող են օգտվել Հին Գորիսի հետաքրքիր կենցաղին ծանոթանալ ցանկացող տուրիստները: Քրատակերը վերականգնվում են, կահավորվում նախկին կահկարասիներով և հատկացվում զբոսաշրջիկներին: Օժանդակ հարմարությունները՝ լողարանը, զուգարանը, խոհանոցը, որոնք

ընդհանուր են լինելու մի քանի հանգրվանների օգտագործման համար, կարող են կազմակերպվել քրատակերից դուրս, վերականգնվող ժողովրդական տներում՝ «Ղարադամներում»:

բ. Ժողովրդական տուն հանգրվաններ (էթնոտուրիզմ, էկոտուրիզմ) - այս հանգրվանները կազմակերպվում են 18-19-րդ դարերում Հին Գորիսում կառուցված ժողովրդական տներում՝ «Ղարադամներում»: Հին Գորիսի ժողովրդական տները վերակառուցվում են, լրացվում օժանդակ հարմարություններով և տրամադրվում տուրիստներին:

գ. Ժամանակակից հարմարավետ հանգրվաններ – սրանք կարող են կազմակերպվել հին գորիսի տարածքում 19-րդ դ.վերջին և 20-րդ դ. սկզբին կառուցած քաղաքատիպ բնակելի տների վերականգնմամբ-վերակառուցմամբ և մասամբ նոր՝ ժամանակակից կառույցներում, որոնց իրականացման համար հիմք պետք է ընդունվի հին գորիսյան ճարտարապետության առողջ ավանդույթները՝ կառուցապատման սկզբունքները, մասշտաբը, ոճական առանձնահատկությունները և այլն: Այդ հանգրվաններից ամեն մեկը հագեցված է լինելու ժամանակակից բարձրակարգ սպասարկմամբ՝ բոլոր հարմարություններով:

Տուրիստական կոմպլեքսում քրատակերի ու Ղարադամների մի խումբ ցանկալի է վերականգնել և պահպանել որպես ազգագրական թանգարաններ: Նրանց մի մասը կարող է տրամադրվել ժողովրդական արհեստավորներին:

Հին Գորիսում կարող են առանձնացվել տարածքներ վրաններ տեղադրելու և տարբեր միջազգային և տեղական միջոցառումներ կազմակերպելու («Բազե», սկաուտական բանակումներ և այլն), ինչպես նաև վրաններով ճանապարհորդող անհատ զբոսաշրջիկների համար:

7.6.5 Սոցիալական կիրառումների և կայուն զարգացման հնարավորություններ

Հին Գորիսի արգելոցի վերկանգնումը կծառայի տուրիզմի զարգացմանը, քաղաքային կյանքի աշխուժացմանը և կստեղծի նոր աշխատատեղեր տեղի բնակչության համար: Եվ ամենկարևորը կստեղծվի մի միջավայր, ուր կպահպանվեն և կօգտագործվեն հուշարձանները:

7.6.6 Ամրացման/ծածկապատման, վերանորոգման, կոնսերվացման, վերականգնման գերակայությունների ընդհանուր գնահատում

Հին Գորիս տանող փողոցի նորոգում
Կոմունիկացիաների վերականգնում
Զբոսաշրջային անցուղիների ստեղծում
Մշակութային օջախների ստեղծում
Հյուրանոցների և հյուրատների ստեղծում

7.6.7 Հանրամատչելիություն

Հին Գորիս թաղամասի վերականգնումը և վերաօգտագործումը կարող է տալ թե համայնքային օգուտ և թե մշակութային: Այս ծրագրից նաև կարող են օգուտ քաղել նաև անհատ ներդրողները:

7.6.8 Այլ առավելություններ

-

7.7 Ֆինանսներ

7.7.1 Բյուջետային կարիքների ընդհանուր գնահատում և փուլայնություն

Ճանապարհի վերականգնում – մ^2 - 40000 դրամ (75 euro)

Ընդհանուր վերանորոգվող ճանապարհը կկազմի 3000 մ: Սալարկման դեպքում կարժենա 720.000.000 դրամ (1.350.000 euro)

Նախագծային արժեքը կկազմի 72.000.000 դրամ (135.000 euro)

Քարանձավների վերականգնում – մ^2 - 400000 դրամ (755 euro) Հաշվառված է մոտավորապես 75 քարանձավ: Միջին չափի քարանձավի մակերեսը կազմում է 25 մ^2: Մեկ քարանձավի վարականգնման արժեքը կկազմի 10.000.000 դրամ (10.019.000 euro)

75 քարանձավի վերականգնման արժեքը կկազմի 750.000.000 դրամ (751.425.000 euro)

Նախագծային արժեքը կկազմի կկազմի 75.000.000 դրամ (75.142.500 euro)
Կիսավեր կառույցների վերականգնում – մ^2 – 1.000.000 դրամ (1887 euro)
Պահմապնվել է մոտ 50 բնակելի կիսավեր տուն, միջին մակերեսը՝ 200 մ^2:
Մեկ տան վերականգնման արժեքը կկազմի 200.000.000 դրամ (377.400 euro)
50 բնակելի տան վերականգնումը կկազմի 10.000.000.000 դրամ (18.870.000 euro)
Նախագծային արժեքը կկազմի կկազմի 1.000.000.000 դրամ (1.887.000 euro)
Առաջարկվում է նաև պահպանել աշխատանքների հետևյալ փուլայնությունը

- կոմինիացիաների վերականգնում
- ճանապարհի կառուցում
- ժայռափոր կացարանների վերականգում
- Հին Գորիսի բնակելի տների վերականգնում

Կարելի ամեն փուլում վերկանգնել 5-10 քարայր և բնակելի տուն:

7.7.2 Ներդրումների ներգրավման (իրական) հնարավորությունների գնահատում

Պետական միջոցներով կարելի է կատարել որոշ վերականգնման աշխատանքներ, հատկապես կոմինակցիոն, հնարավոր է նաև դիմել մշակութային ժառանգության պահպանմամբ զբաղվող կազմակերպություններին: Անհարժեշտ է նաև ներգրավել այլ կազմակերոպությունների և անհատների ծրագրի մեջ ներդրում կատարելու համար: «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությունըԳորիս քաղաքում այսօր էլ կատարում է հուշարձանների վերականգնաման և պահպանման աշխատանքներ: Հնարավոր է որ հոտագայում նույնպես ձեռնարկվեն: Վիենը հանդիսանում Գորիսի քույր քաղաք և շուրջ 20 տարի է շարունակվում է համագործակցությունը: Հնարավոր է նաև ներգրավել Վիենի քաղաքապետարանին մշակութային ժառանգության պահապանման խնդրի մեջ:

7.7.3 Ներդրումների վերականգնման (իրական) հնարավորությունների գնահատում

Համաշխարհային բանկ, IDEA հիմնադրամ

7.7.4 Արդյոք փորձե՞լ եք միջոցներ հայթայթել տվյալ վայրի կամ հուշարձանի համար:
Եթե այո, ապա ներկայացրեք մանրամասները

Համաշխարհային բանկ, Երկիր եւ մշակույթի, Վիենի քաղաքապետարան

7.7.5 Արդյոք ստացե՞լ եք միջոցներ տվյալ վայրի կամ հուշարձանի համար:
Եթե այո, ապա ներկայացրեք մանրամասները:

-

7.8 Կառավարում

Հին Գորիսի վերականգնումն ու վերաօգտագործումը երկարաժամկետ ծրագիր է:
Այն պետք է իրականացնել փուլերով: Միասնական նախագծի և ծրագրի դեպքում ժամանակի ընթացքում այն կարող է դառնալ Գորիս քաղաքի տուրիզմի և մշակույթի կենտրոն:

8. Փաստաթղթավորում

Նկ.12. Համայնապատկեր՝ Հին Գորիս

Նկ. 13. Համայնապատկեր Հին Գորիս, գերեզմանոց

Նկ.14. Սբ. Հռիփսիմե եկեղեցի

Նկ.15. Սբ. Հռիփսիմե եկեղեցի

Նկ.16. Մելիքների մատուռ

Նկ.17. Հին Գորիսի բնակելի տներ

Նկ.18. Հին Գորիս, քարանձավեր

Նկ.19. Հին Գորիս, Քարանձավային թատրոն

Նկ.20. Հին Գորիս, քարանձավային թատրոն

Նկ. 21. Հին Գորիսի վերականգնման հայեցակարգային առաջարկ 1982թ
Հեղ. Ա. Գրիգորյան, Հ. Սանամյան, Ա. Գյուլամիրյան



Նկ.22. Հին Գորիսի քարանձավի վերականգնման հայեցակարգային առաջարկ 1982թ
Հեղ. Ա. Գրիգորյան, Հ. Սանամյան, Ա. Գյուլամիրյան



Նկ.23. Հին Գորիսի վերականգնման հայեցակարգային առաջարկ 1982թ
Հեղ. Ա. Գրիգորյան, Հ. Սանամյան, Ա. Գյուլամիրյան

Նկ.24. Քառանձավային քաղաքի վերաօգտագործման օրինակ, Ֆրանսիա, Լուրես-Ռոշմանյե
http://io9.gizmodo.com/remarkable-cave-houses-including-the-homes-that-inspir-502255017

Նկ.25. Քառանձավային քաղաքի վերաօգտագործման օրինակ, Թուրքիա, Կապադովկիա
http://io9.gizmodo.com/remarkable-cave-houses-including-the-homes-that-inspir-502255017

Նկ.26 Քառանձավային քաղաքի վերաօգտագործման օրինակ, Թուրքիա, Կապադովկիա
http://io9.gizmodo.com/remarkable-cave-houses-including-the-homes-that-inspir-502255017

Նկ.27Քառանձավային քաղաքի վերաօգտագործման օրինակ, Ֆրանսիա, Լուրես-Ռոշմանյե
http://io9.gizmodo.com/remarkable-cave-houses-including-the-homes-that-inspir-502255017

9. Նպատակահարմարության վերաբերյալ

ՆՏԳ-ն իրականացրել են՝ Սանամյան Հովհաննես եւ Քալանթարյան Նանար: